Հաշվետվություն
2025 թվականի օգոստոսի 5-ից 9-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Միեր Խաչատրյան, Կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղար,

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Նյու Յորք, օգոստոսի 5-ից 9-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտե (UN-GGIM):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների 15-րդ նստաշրջանին:

5. **Քննարկված թեմաները.**

- համաշխարհային երկրատարածական տեղեկատվության կառավարման ամրապնդման մեխանիզմներ,

- տարածաշրջանային կոմիտեների ներդրումը գլոբալ երկրատարածական տեղեկատվության ոլորտում,

- թեմատիկ ցանցերի ներդրումը երկրատարածական տեղեկատվությանն առնչվող համաշխարհային օրակարգում,

- երկրատարածական տեղեկատվության ապագա էկոհամակարգ,

- ՄԱԿ-ի ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակին (UN-IGIF) առնչվող հարցեր,

- համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգ,

- երկրատարածական տեղեկատվության կիրառումը կայուն զարգացման և կլիմայի փոփոխություններին դիմակայունության բարձրացման ապահովման նպատակով,

- երկրատարածական, վիճակագրական և այլ առնչվող տեղեկատվության ինտեգրում,

- երկրատարածական տեղեկատվության կիրառումը հողօգտագործման և հողաշինարարության բնագավառում,

- վստահելի և ճշգրիտ տվյալներին, նորագույն տեխնոլոգիաներին առնչվող քաղաքական և իրավական շրջանակներ,
- ստանդարտների ընդունում և կիրառում երկրատարածական տեղեկատվության հարցերով զբաղվող համաշխարհային համայնքի համար,
- աշխարհագրական անվանումներ ստանդարտացում, համագործակցություն ՄԱԿ-ի աշխարհագրական անվանումների փորձագետների խմբի հետ,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման շրջանակում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը հանդես է եկել օրակարգի 7-րդ (ՄԱԿ-ի ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակ), 9-րդ (Երկրատարածական տեղեկատվությունը՝ կայուն զարգացման համար) և 12-րդ (Ինտեգրված երկրատարածական տվյալներ՝ հողերի արդյունավետ կառավարման համար) կետերին առնչվող ելույթներով:

Առանձին հանդիպումներ ենք ունեցել Շվեդիայի Թագավորության, Կիպրոսի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչների հետ, քննարկել ենք ընդհանուր ոլորտային հարցեր և հնարավոր նոր համագործակցությունների հեռանկարները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Մասնակիցներին է ներկայացվել գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի ծրագրերի կառավարման վերաբերյալ զեկույցը, հաջորդ՝ 16-րդ նստաշրջանի նախնական օրակարգն ու անցկացման ժամկետները: Քննարկվել են փորձագետների կոմիտեի գործունեության ուղղությունները՝ հիմնված առկա առաջնահերթությունների վրա: Անդրադարձ է կատարվել Գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման հարցերով ՄԱԿ-ի փորձագետների կոմիտեի Կենտրոնների (Գլոբալ աշխարհատարածական էկոհամակարգի առաջադեմ տեխնոլոգիաների կենտրոն, Գլոբալ գեոդեզիական առաջադեմ տեխնոլոգիաների կենտրոն, Գլոբալ աշխարհատարածական գիտելիքի և նորարարության կենտրոն) գործունեությանը, ինչպես նաև վերոնշյալ հաստատությունների հետ համագործակցության ծավալման հեռանկարներին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝

եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է ակտիվորեն շարունակել համագործակցությունը ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտե աշխատանքային խմբերում:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Միեր Խաչատրյան 25.08.2025